



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սրտմենել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ-Մ-Ը-Մ-Ի

(ՀԱՅ ՄԱՐՄԱՆԱԿԹՈՍԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԻՈՒԹԻՒՆ)

Երևան
833



1921

Կ. ԳՈՒԼԻՍ



ԾՐԱԳՐԻՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՌԻՅՈՎ

Հ. Մ. Ը. Մ. հիմնուած է համաշխարհային պատերազմի զինադադարին յաջորդ օրն իսկ, 1918 Նոյեմբերին, Կ. Պոլսոյ մէջ:

Հիմնադիրները նպատակ ունեցած են ի մի ձուլել նախկին բոլոր մարզական ակումբները եւ միակ ծրագրով ընդ առաջ երթա՛լ ազգային վերականգնումի գործին, միեւնոյն ատեն՝ շարժումը տարածելով ամբողջ հայութեան մէջ:


Մարզականին հետ ձեռք առնուած է նաեւ Սկստուական շարժումը՝ որ նոր է աշխարհի համար, զոր մտադրած են տարածել հայութեան բոլոր հատուածներու եւ խաւերու պատկանող պատանիներուն մէջ:

Հոս չենք ուզեր պատմականը ընել գործին, միայն կ'ուզենք շեշտել որ՝ Միութիւնը իր վրայ առած է բաւական ծանր եւ պատասխանատու դեր մը՝ որուն յաջողութեան համար ոչ մէկ զոհողութիւն չպիտի խնայէ, հաւատացած ըլլալով որ՝ իր ԳՈՐԾԸ ազգային ֆիզիքական—բարոյական տեսակէտով ամենակենսական եւ հիմնական ձեռնարկներէն է:

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Մ. Ը. Մ. Ի

(ՀԱՅ ՄԱՐՄԵԱԿՐԹՍԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ)



ՆՊԱՏԱԿ

Յօդ. 1. — Հ. Մ. Ը. Մ. Ի նպատակն է ֆիզիքական և առողջ դաստիարակութիւն մը տալով պատանիին՝ սատարել ցեղին բարոյական և իմացական բարձրացման : Սովորեցնել անոր՝ ըլլալ շարքաշ և ժուժկալ, կարգապահ և օրինապահ, արթուն, արագ և ճիշտ դատող, ձեռներէց, կորովի, արի, հայրենասէր՝ զարգացնելով անհատին մէջ պարտականութեան, պատասխանատուութեան և պատուի զգացումներ, համերաշխութեան և փոխադարձ օգնութեան ոգի :

Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր

Յօդ. 2. — Հ. Մ. Ը. Մ. Ը իր նպատակը իրագործելու համար ի գործ կը դնէ հետեւեալ միջոցները :

Ա. Սկսուտական կրթութիւն՝ կազմելով սկսուճներու և կայսերու խումբեր՝ իրենց յարակից դասերով (Քայլիկներ, երեցներ և այլն) :

Բ. Շուէտական մարզանք՝ իր նորագոյն մէթոտներով :

Գ. Աթլեթիք և դաշտային խաղեր (Ֆուտսպօլ, Պասկետսպօլ, Թենիս և այլն Ռսսոհականաւաւներ, Ծովային մարզանքներ ևլն :

Դ. Դասախօսութիւններ :

Ե. Հրատարակութիւն հանդէսներու, գրքոյկներու, գիրքերու՝ միութեան նպատակին հետ սերտ առնչութիւն ունեցող նիւթերու վրայ :

Զ. Մատենադարաններ՝ օժտուած միութեան առաջադրած նպատակին իրագործման ծառայող գիրքերով :

Է. Հաւաքավայրեր և մարդարաններ :

Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Յօդ. 3. — Հ. Մ. Ը. Մ. ի կրնայ անդամակցիլ եօթը տարեկանը լրացնող ամէն հայ :

Յօդ. 4. — Միութեան անդամակցիլ փափաքող մը պարտի դիմել իր թաղին մասնաճիւղին՝ ստորագրելով «Անդամակցութեան Առաջարկ» մը. մասնաճիւղային վարչութիւնը պարտաւոր է մինչեւ 15 օր յայտնել իր որոշումը : Ընդունուած անդամի մը գէմ կեդրոնական վարչութեան կողմէ ըլլալիք ուէ դիտողութիւն և որոշում պէտք է նկատի տանուի և տառապէս գործադրուի մասնաճիւղային վարչութեան կողմէ :

Յօդ. 5. — Կեդրոնական վարչութիւնը ան-

դամի մը մասին ուէ առարկութիւն չունենալու պարագային կը ղրկէ «Ինքնութեան տոմս» ը :

Յօդ. 6. — Միութեան անդամները կ'ըլլան :

Ա. Գործօն .

Բ. Համակիր :

Յօդ. 7. — Գործօն կը նկատուին եօթը տարեկանէն սկսեալ մինչեւ քսան տարեկանը լրացնողները :

Յօդ. 8. — Եօթնէն քսաներկու տարեկանները պարտին հետեւիլ սկաուտական նախապատրաստական ճիւղին :

Յօդ. 9. — Տասներկու տարեկանէն մինչեւ քսանըվեց տարեկան , պարտաւոր են մնալ սկաուտական շարքերու մէջ :

Յօդ. 10. — Տասնըվեց տարեկանը լրացնելէ վերջ , միութեան անդամակցողները սկաուտական շարքերու մէջ չեն ընդունուիր , և սակայն պարտաւոր են մինչեւ քսան տարեկանը լրացնելը , հետեւիլ ուէ մարզական ճիւղի :

Յօդ. 11. — Համակիր կը նկատուին քսան տարեկանէն վեր եղողները . իսկ անոնք որ , ուէ կերպով կը շարունակեն աշխատիլ մասնաճիւղերու ներքին կեանքին մէջ , կը պահեն «գործօն» ի հանդամանքը :

ԲԱՐԵՐԱՐ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱԼ ԱՆԴԱՄՆԵՐ

Յօդ. 12. — «Բարերար» անդամ կը հռչակուին

Handwritten text at the top of the page, possibly a title or header.

Main body of handwritten text, consisting of several lines of cursive script.

U U U U U X X X X X P P P

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or footer.

անդամ կամ ոչ անդամ այն անհատները՝ որոնք նիւթական կարեւոր նուիրատութիւն մը կ'ընեն միութեան :

Յօդ. 13. — «Պատուակալ անդամ» կը հրահակուին անդամ կամ ոչ անդամ այն անհատները՝ որոնք գնահատելի ծառայութիւն մը կը մատուցանեն միութեան :

Յօդ. 14. — Բարերար կամ Պատուակալ հրահակուելու առաջարկ մը պէտք է գայ Մասնաճիւղային վարչութեան մը կողմէ, որմէ վերջ Շրջանի վարչութիւնը հաւանութիւն տալու պարագային, կը տեղեկացնէ կեդրոնական վարչութեան, ստանալու համար հռչակումի պաշտօնաթուղթը :

Յօդ. 15. — կեդրոնական վարչութիւնը կրնայ ինքն ալ իր յարմար դատած մէկ անձը, ուղղակի բարերար կամ պատուակալ անդամ հռչակել :

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ե Ր

Յօդ. 16. — Մասնաճիւղի մը կազմութեան համար անհրաժեշտ են առնուազն քսան հոգի :

Յօդ. 17. — Նուազագոյն ութը հոգի, կրնայ դիմել իրենց մօտ եղող շրջանի վարչութեան և անոր կողմէ ցոյց տրուելիք մասնաճիւղի մը հետ կապ հաստատել, Այս ութը հոգիները իրենց մէջէն կ'ընտրեն երեք հոգիէ բաղկացած «Արժամեայ վարչութիւն» մը, որ ինքնագլուխ չէ,

այլ իր սլատկանած Մասնածիւղային վարչութեան
հրահանգներով կը ղեկավարուի, մինչեւ որ ան-
դամներու թիւը հասնի քսանի, որմէ յետոյ իբր
առանձին վարչութիւն կը վաւերացուի եթէ
յարմար տեսնուի :

Յօդ. 18. — Մասնածիւղերը ունին երկու
ժողով :

Ա. Մասնածիւղային Ընդհանուր ժողով :

Բ. Մասնածիւղային վարչական ժողով :

ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ԸՆԴ. ԺՈՂՈՎ

Յօդ. 19. — Մասնածիւղային Ընդհանուր ժո-
ղովներու կը մասնակցին բոլոր անդամները, բացի
սլատուակալ, բարերար և քասներկու տարեկանը
չը լրացնող անդամներէ :

Յօդ. 20. — քասներկուէն քասնընկուց տարե-
կանները կը մասնակցին Ընդհ. ժողովներու,
առանց քուէի իրաւունքի :

Յօդ. 21. — Եօթնէն քասներկու տարեկան-
ները իրենց առաջարկները կամ դիտողութիւն-
ները կը ներկայացնեն Ընդհանուր ժողովին իրենց
խմբապետին, փոխ խմբապետին կամ խմբակի
առաջնորդներու ներկայացուցիչին միջոցաւ :

Յօդ. 22. — Մասնածիւղային Ընդհ. ժողովը
կը ղեկավարուի առժամեայ դիւանով մը :

Յօդ. 23. — Մասնածիւղային Ընդհ. ժողովին
պաշտօնն է, լսել վարչութեանց համարատուու-

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs and is mostly illegible due to fading and low contrast.

UNIVERSITY OF TORONTO LIBRARY

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs and is mostly illegible due to fading and low contrast.

թիւնը և հաշուեալութիւնը , ընտրել նոր վարչութիւնը , լուծել օրակարգի վրայ գտնուած խընդիրները , ընտրել Շրջանային Ընդհ. Ժողովին համար պատգամաւորներ :

Յօդ. 24. — Մասնաճիւղային Ընդհ. Ժողովները կը գումարուին տարին մէկ անգամ . բացառիկ ժողովներ կրնան ըլլալ ,

Ա. Երբ Մասնաճիւղային վարչութիւնը հարկ տեսնէ ,

Բ. Երբ քուէի իրաւունք ունեցող անդամներու մէկ երրորդը գրաւոր պատճառաբանութեամբ մը պահանջէ :

Յօդ. 25. — Մասնաճիւղային Ընդհ. Ժողովներու ներկայ եղողներու ու է թիւ մեծամասնութիւն կը նկատուի , պայմանաւ որ գումարումէն առնուածն երեք օր առաջ հրաւէր ըլլայ տեղեկան թերթերու միջոցաւ , եթէ կան , և կամ մասնաւոր նամակով :

ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 26. — վարչութիւնը կը բաղկանայ եօթը հոգիէ որոնք կ'ըլլան ասեցապետ , ասեցադպիր , գանձապետ , համարակալ , գոյքապահ (ասոնք կը կոչուին վարչական անդամներ) սկանուս և շուկասականի խմբապետ , արխիբի և ֆուսպօլի խմբապետ (ասոնք կը կոչուին մարզական անդամներ) :

ԾԱՆՅԹ. — Մասնաճիւղերու վարչութեան ընտրելի անդամները , պէտք է 18 տարեկանը լրացուցած ըլլան :

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 15 horizontal lines across the page.

Յօդ. 27. — Վարչութեան մը վարչական անդամներէն մէկ կամ երկուքին հրաժարման պարագային, տեղը նորեր կ'առնուին Ընդհ. Ժողովին մէջ վարչութեան ընտրութեան առթիւ առաւելագոյն քուէ շահողներէն: Իսկ մեծամասնութեան հրաժարելու պարագային նոր ընտրութիւն կը կատարուի:

Յօդ. 28. — Վարչութիւնը կը պաշտօնավարէ միայն մէկ օր:

Յօդ. 29. — Վարչութիւնը ընտրուելէ վերջ կը վաւերացուի շրջանի վարչութենէն:

Յօդ. 30. — Եթէ մասնաճիւղի մը մէջ գրտնուին մէկէ աւելի սկառուտական խմբեր և անոնց վարիչները ունենան հաւասար աստիճաններ, անոնք կ'ընտրեն լիազօր աւագ վարիչ մը որ պէտք է մաս կազմէ վարչութեան իբր սկառուտ և շուէտականի խմբապետ:

Յօդ. 31. — Մասնաճիւղային վարչութիւնները պարտաւոր են ամէն ամսոյ վերջ իրենց տեղեկագիրը ղրկել շրջանի վարչութեան:

Յօդ. 32. — Մասնաճիւղային վարչութիւնք պէտք է ջանան Ջ. Մ. Ը. Մ. ի առաջագրած նպատակը իրագործելու համար ցոյց տրուած միջոցները հաւասարապէս գործադրել:

ԾԱՆՕԹ. — Կեդրոնական վարչութեան, Կեդրոնի Յանձնախումբերու եւ Շրջանային վարչութեան անդամները՝ մասնաճիւղերու մէջ պատասխանատու պաշտօն չ'են կրնար ստանձնել:

Ա. Նուազագոյն քսան անդամի համար մէկ պատգամաւոր .

Բ. Քսան էն վեր իւրաքանչիւր յիսուն անդամի համար մէկ պատգամաւոր :

Յօդ. 39. — Մասնաճիւղերը կրնան իրենց պատգամաւորները ընտրել ուրիշ մասնաճիւղերու պատկանող անդամներէն ալ :

Յօդ. 40. — Շրջանային ընդհ. ժողովի պատուօնն է ,

Ա. Քննել իրեն ենթակայ մասնաճիւղերու տարեկան գործունէութեան տեղեկագիրները՝ զորս պատգամաւորները պարտին ներկայացնել .

Բ. Ընտրել շրջանային վարչութիւնը .

Դ. Ընտրել Ընդհ. Պատգամաւորական Ժողովին համար պատգամաւորներ :

Յօդ. 41. — Շրջանային ընդհ. ժողովները իրենց պատգամաւորները կ'ընտրեն հետեւեալ հիման վրայ ,

Մեկէն մինչեւ եօթը Պատգամաւոր ունեցող շրջանները մէկ պատգամաւոր՝ իսկ անկէ վեր իւրաքանչիւր հինգ պատգամաւորի փոխարէն մէկ պատգամաւոր :

Օրինակ , Շրջանային Ընդհ. ժողովին մէջ 17 պատգամաւոր ունեցող շրջան մը՝ կ'ընտրէ 3 պատգամաւոր Ընդհ. Պատգամաւորական Ժողովին համար :

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 42. — Շրջանային վարչութեան պաշտօնը կը տեւէ մէկ տարի :

Յօդ. 43. — Շրջանային վարչութիւնը կը բաղկանայ 7 հոգիէ, որոնց երկուքը կ'ըլլան մարզական և սկաուտ մասնագէտներ : Ասոնք կը մասնակցին 45 ըդ յօդ.ի համաձայն կազմելի յանձնախմբերու :

Յօդ. 44. — Շրջանային վարչութիւնը կրնայ, եթէ պէտք տեսնէ, կազմել յանձնախմբեր սկաուտական և դաշտային խաղերու համար :

Յօդ. 45. — Շրջանային վարչութիւնը ամէն ամիս իր իսկ գործունէութեան մէկ տեղեկագիրը, ինչպէս նաեւ 32 ըդ յօդ.ի համաձայն իրեն ենթակայ մասնաճիւղային վարչութիւններէ գալիք ամսական տեղեկագիրներու մէկ ամփոփումը կը ղրկէ կեդրոնական վարչութեան :

Յօդ. 46. — Շրջանային վարչութիւնը կրնայ նշանակել քննիչներ, շրջանին վերաբերեալ գործերու մասին ամէն տեսակի քննութիւն կատարելու պաշտօնով :

Քննիչները կրնան մասնակցիլ խորհրդակցական ձայնով Մասնաճիւղային Ընդհ. Ժողովներու :

Յօդ. 47. — Շրջանի մը մաս չկազմող մասնաճիւղերը ուղղակի կեդրոնական վարչութեան հետ կապ կը պահեն և անոր պատասխանատու են :

LETTERS FROM THE EDITOR

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs and is difficult to decipher due to its low contrast and orientation.

ՎԵՐԻՆ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 48. — Հ.Մ.Ը.Մ.ի վերին երկու ժողովներն են ,

Ա. Ընդհանուր Պատգամաւորական ժողով :

Բ. Կեդրոնական Վարչական ժողով :

Յօդ. 49. — Ընդհանուր Պատգամաւորական ժողովը կը գումարուի երեք տարին անգամ մը , շրջանային ընդհ. ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւորներով . յարմարագոյն վայր մը կ'որոշուի Կեդրոնական Վարչութեան կողմէ :

Յօդ. 50. — Ընդհ. Պատգ. ժողովոյ պաշտօնն է :

Ա. Քննել շրջաններէ եկած տեղեկագիրները :

Բ. Ընտրել Կեդրոնական Վարչական ժողովը :

Գ. Որոշել միութեան ընդհանուր ուղեգիծը :

Դ. Քննել և վաւերացնել , ի հարկին միութեան ընդհանուր ելմտացոյցը ,

Ե. Ընտրել մնայուն հաշուեքննիչ մարմին մը երեք հոգիէ բաղկացեալ :

Յօդ. 51. — Բացառիկ Ընդհ. Պատգամաւորական ժողովներ կրնան գումարուիլ ,

Ա. Եթէ Կեդրոնական Վարչական ժողովը պէտք տեսնէ :

Բ. Եւ կամ պատգամաւորներու մէկ երեւոյթը պահանջէ :

Յօդ. 52. — Ընդհ. Պատգամաւորական ժողովոյ անդամներու պաշտօնը կը տեւէ երեք տարի :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 53. — Կեդրոնական վարչական ժողովը կ'ընտրուի Ընդհանուր Պատգ. ժողովէն և կը բաղկանայ եօթն անդամէ և չորս փոխանդամէ. այս վերջինները ժողովներու կը մասնակցին խորհրդակցական ձայնով :

Յօդ. 54. — Եթէ Կեդր. վարչական ժողովը իր մեծամասնութիւնը կորսնցնէ, Ընդհ. Պատգմ. ժողովը կ'ընտրէ նոր վարչ. ժողով մը :

Յօդ. 55. — Եթէ Կեդր. վարչական ժողովի անդամներէն մին հրաժարի, փոխանդամներէն առաւելագոյն քուէ շահողը անոր կը յաջորդէ :

Յօդ. 56. — Կեդր. վարչական ժողովի ղեկանը կը բաղկանայ մէկ ատենապետէ և մէկ ատենադպիրէ :

Յօդ. 57. — Կեդր. վարչական ժողովի անդամները կ'ընտրուին քանքակ տարեկանը լրացնող գործօն և համակիր անդամներէն :

Յօդ. 58. — Կեդր. վարչական ժողովը իրեն օժանդակ պէտք է առնէ հետեւեալ յանձնախմբերը :

Ա. Սկստուտական ,

Բ. Մարզական , (Շուետական , Ֆուտպօլ ,

Աթլէթիք .

Գ. Բրօքականտ (մամուլ , դասասխօսութիւն և այլն) :

Յօդ. 59. — Վերոյիշեալ յանձնախմբերէն զատ

1. Die ...
 2. Die ...
 3. Die ...

4. Die ...
 5. Die ...
 6. Die ...
 7. Die ...
 8. Die ...

1828

9. Die ...
 10. Die ...
 11. Die ...
 12. Die ...
 13. Die ...
 14. Die ...
 15. Die ...

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ իր անհրաժեշտ նկատած յանձնախմբերը ընտրել :

Յօդ. 60. — Կեդր. վարչական ժողովի պաշտօնն է :

Ա. Գործադրել միութեան ծրագիրը :

Բ. Միութեան բոլոր գործերուն վերին հսկողութիւնը կատարել :

Գ. Պատրաստել իր ելմտացոյցը և ներկայացնել Ընդհ. Պատգ. ժողովին :

Դ. Ծանօթացնել հայութեան բոլոր մասերուն և խաւերուն՝ Հ. Մ. Ը. Մ. ը և տարածել զայն :
Կեդր. Վարչ. պաշտօնը կը տեւէ երեք տարի :

Պ Ի Ի Տ Ճ Է

Յօդ. 61. — Կեդրոնական վարչական ժողովի պիւտճէն ապահովող միջոցներն են ,

Ա. Ընդհանուր Ողիմպիական մրցումներ ,

Բ. Վիճակահանութիւններ ,

Գ. Զանազան հանդէսներ (մարզական , թատերական և երաժշտական) :

Դ. Ցուցահանդէսներ և պազար (սկառւտներու կողմէ շինուած առարկաներու) :

Ե. Վաճառում միութեան կողմէ հրատարակւած գրքերու և գրքոյկներու ,

Զ. Նուիրատուութիւններ և հանգանակութիւն :

Է. Շրջանին և մասնաճիւղին ղրկելիք գումարը (63 ըդ. յօդուածին համաձայն) :

Յօդ. 62. — Մասնաճիւղերը պարտին իրենց հասոյթներուն 300/0 ը ղրկել այն շրջանին վարչութեան որուն մաս կը կազմեն :

Յօդ. 63. — Շրջանի մը մաս չըկազմող մասնաճիւղերը վերոյիշեալ 300/0 ը պարտին ղրկել ուղղակի կեդր. վարչութեան :

Յօդ. 64. — Շրջանային վարչութիւնք իրենց մասնաճիւղերէն ստանալիք 300/0 էն 100/0 ը միայն իրենց համար վար դնելով՝ 200/0 ը պարտին ղրկել կեդրոնական վարչութեան :

Յօդ. 65. — Շրջանային վարչութիւններու նախաձեռնութեամբ գոյացած ո և է հասոյթի 300/0 ը նոյնպէս, պէտք է ղրկուիլ կեդր. վարչական ժողովին :

ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Յօդ. 66. — Միութիւնը պէտք է ջանայ,

Ա. Նիւթական միջոցներ տրամադրել միութեան անդամներէն պատրաստելու համար մասնագէտներ՝ սկստական և մարզական ճիւղերու :

Բ. Միջազգային Ողիմպիական մրցումներուն մասնակցութեան : Սոյն մրցումներուն ղըրկուելիք մարզիկները կ'առնուին Հայ. Ընդհ. Ողիմ-

1851
The following is a list of the names of the
persons who have been admitted to the
membership of the Society since the
last meeting. The names are given in
the order in which they were admitted.
The names of the persons who have
been admitted to the membership of
the Society since the last meeting are
as follows:—

1851

The following is a list of the names of the
persons who have been admitted to the
membership of the Society since the
last meeting. The names are given in
the order in which they were admitted.
The names of the persons who have
been admitted to the membership of
the Society since the last meeting are
as follows:—

պիական մրցումներումէջ համաշխարհային մր-
ցանիշներու մօտ նիշ ունեցող իր անդամներէն ,
որոնց մէջէն յաջողագոյնները կ'որոշուին՝ Միջազ-
գային Ողիմպիական Մրցումներու թուականէն
երկու ամիս առաջ՝ կեդրոնական վարչական ժողո-
վէն նշանակուած դատաւորներու ներկայութեան
տեղի ունենալիք մասնակի մրցումէն :

Գ. Ունենալ զանազան երկիրներու մէջ գու-
մարուող Միջազգային Սկաուտական և Մարմնա-
կրթական Համաժողովներու մէջ ներկայացուցիչ :

1921 Յունիս 19

Կ. Պոլիս


Հ. Մ. Ը. Մ.

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ



Ծանօթութիւն.— Պարապ եջերուն վրա՛յ հա-
մապաստիսան յօդուածին դիմա՛ց պիտի գրուին առ-
ժամեայ փոփոխութիւնները կամ՝ յաւելուածները.
որոնք պիտի հրահանգուին Եւրոպական վարչու-
թեան կողմէ:





ԳԱՍ Հիմնարար գիտ. գրադ.



FL0319269

Մոզ

833



ԿԼԱՍ ԴՊՐԿՆԻՔԻ Կ. ՆՈՒՍԵ